



ԾԱՌԻԿ

ԽՄԲԱԳՐԱԹԵՐԸ Է՝ ՊՐ. ԹԱՐԱՍԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԹԵՐԸ՝ ԵՍ, ԳՈՐԿ, ՍՆ, ՄԵՆԵ, ԳՈՐԿ, ՍՆՈՐԿ,
ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ՍԱՆՈՐ ՊԱՊԿՍԵԱՆ, Լ. ԼԱՐՍԵՆ,
ԵՐ. ԶԱՎԱՆԵՆԵԱՆ, ՄԻԶՐԻԱՆ ՀԱՅԿԱՆ
(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Սա եմ «Ծաղիկ» եւ ինձ գտա «Ծաղիկ» չպիտի մանցնաւ,
Իմ անունս պարագ սեղ զարուհակ բերանսիդ պիտի տունէ:
Իմ փարոս կանխիկ պիտի դրկէ:
Ամէն մարդ պիտի է յարգէ եւ զլիսուն վրայ նստցնէ զիս:
Այ՛ ո՛ր պիտի է աչք ընեալ իմ փարոսիս, բո՛ղ աչք ունեցողին աւեր
կուայ:
Պէտք չէ իմ փարոս ձեր կոկորդը անցրնէ:
Պէտք չէ նկատուի, երբ ձեր զրկած յոգնածներ չօգուտին:
Պէտք է ձայն անգամ չհանկէ եւ զլիսուն վրայ դնէ, երբ ձեզի
դէմ գրուի այս սխալակներուն մեջ:
Նրբ զարկ քաղուիմ, պէտք չէ մեղանկէ:
Եւ երբ մեղանկելու մօտ ըլլա՞մ, պէտք է... Բացալս խմէ:
Թիի 78 Տնօրէն Ռ. Սաղաեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուշուկու խան Թի. 7

ՈՒՐԱԹ 23 ՅՆՆ. 1909 ۞ در علمه علامه قزوینی خاند ۞

ՄԱՍՈՒԼԸ ՊԻՏԻ ՍԵՂՍԵՆ...

Ա՛լ կը թաւէ, անանկ չէ՛:
Հե՛րիք այլ եւս որքան տտեն—
վեց ամիս թոյլ տունն մեզի որ
մենք ուզածնիս գրենք եւ մեր բե-
րանին կղպանք հասնե՞ք:
Ծա՛տ է ամանկ չէ՛...:
Ի՛նչ իրաւունք ունինք ասկէ ա-
ւելին պահանջելու թուրք բարեխնամ
կառավարութենէն — Աստուած եր-
կար կեանք տայ, որ արդէն չափէն
աւելի արտօնեց մեզի որ ուզածնիս
գրենք, վստահ ըլլալով թէ ի՛նչ որ
ալ ըլլար մենք պիտի քաղուէինք ա-
մէն բան ուղղակի ըսելու... վեց
ամսուան միջոցին:

Բայց երբ հիմայ հետզհետէ ինք-
զինքնիս կը գտնենք եւ կը գրենք
Թուրք բարեխնամ կառավարութեան
չուզածները, երբ իրեն պոչին վրայ
կը կոխենք եւ քիթերու հետ կը խա-
ղանք, երբ հին օրերու մէջ մեզ իր
քիթովը խախցնողը այսօր, մեր խա-
ղալիքը կ'ըլլայ, ա՛լ ի՛նչպէս կուզէք
որ մեզի հաշտ աչքով նայիս եւ երանի
չի տան, այն օրերուն երբ կարող
էին մեզի Աքիա... աւագ կլլելու՝
եւ ծովուն տակը՝ ձուկ որսալու
ղր'ել...:

Իայց ամէն բան չափ մը ունի, ալ
հերիք, սքօթեալ:
Ապահովաբար վաղը միւս օր պիտի
սխիւնք վարչապետին անունին առջեւ
յարձր մը դնել եւ Հռոմի Դիսպոստ
Հագագը պէյի եւ Ներքին գործոց Նա-
խարարին առջեւ... խոշոր սեփիր
մը:

Ալ թոյլ չի պիտի տան որ եր-
կինքի աստղերուն վրայ խօսինք,
քանի որ աստղը Նըլաղը կը թարգ-
մանուի եւ Նըլաղի անունը բերանը
տունելը կը նշանակէ թէ Տէրութիւնը
անպատճառ կործանելու միտք ու-
նինք:

Նըլաղ մի՛. այն օրը որ Նըլաղը
գրեմ, ես գիտեմ թէ Սամի փաշա
ինծի մինչեւ ո՛ւր տեղեր կը զրկէ,
այդ ամենակարող Սամի փաշան, որ
ամենայն քաջասրտութեամբ ձերբա-
կալեց ու ծակը նետեց Ֆիհասթարանը
Միլիթի անդամները:

Թուրքիոյ մէջ ամէն մարդ կա-

րող կ'ըլլայ երբ գտնէ, գտնէ... փա-
շայի մը սեյիսն է:

Ամենակարողութիւնը ամէն մարդ
Աստուծոյ կուտայ ուրիշ երկիրներու
մէջ, իսկ Թուրքիա ամէն բան վրայ
կուտայ բացի ամենակարողութենէն:
Աստուծոյ բերնին է ինկեր Թուրքիոյ
մէջ ամենակարող ըլլալ. չա՛տ չա՛տ,
թաշ չարչարել, ի՛նչ կարող կրնայ
ըլլալ ան ալ եթէ իրաւէ մը ելլէ:

Մամուլը սեղմելէն վերջ իմ գիտ-
ցած Թուրքիա որ մինչեւ հիմայ չէր
բարեկարգուեր եւ մենք որ ամէն օր
կը գրէինք թէ բարեկարգուած չէ
ու բարեկարգուելիք ալ չունի, պիտի
սկսինք ներքողակց տողերով փա-
ռաւորել եւ նոյն իսկ քիթին հա-
մար երկու տողը անգամ մը պիտի
աղօթենք եւ չորս տողը անգամ մը՝
երկար կեանք պիտի մաղթենք Աս-
տուծոյ:

Ալ երթայ բարով Սահմանադ-
րութիւնը, երթայ բարով Մամուլի
աղատութիւնը:

Թող մէկ մը սեղմեն Մամուլը,
ու այն օրէն դուք պիտի տեսնէք
որ հրաշքով մը փոխուած է Թուր-
քիան:

Փողոցները մաքուր են այլ եւս,
փոխները բարեկերթ, ասայից պիտի
իմա՞յ ջր... Անատուրի նոյն իսկ
ամենահեռաւոր անկիւններուն մէջ:
Վաճառականութիւնը օրէ օր կը զար-
գանայ, ճարտարաբանստը կը յա-
ռաջդիմէ, խճուղիներ կը շինուին,
կամուրջներ կը հաստատուին, Բա-
րաքէօյի կա՛մուրջը քամիւ կ'ըլլայ,
Բէմալ պէյ՝ տպագրական նախորդ
տեսուչ օջանախը՝ բաց կառքով կը
պտտի, ժողովարարու անձրեւը կը
կսկսի, պէտք եղածէն աւելի թնդա-
նօթներ կը զետեղուին Նըլաղի ա-
մէն կողմը et patati et patata!

Մամուլը աղատ ըլլալուն համար
է որ Թուրքիան չը բարեկարգուեր
եղեր. վեց ամիսէ ի վեր փորձը ցոյց
տուաւ:

Մամուլը ո՛վ կ'ըլլայ որ աղատ
ըլլայ:

Մամուլը քաղաքական յանցաւոր
է որ աղատ արձակուի:

Խերը անիծելու է Մամուլին, որ
Անատուրի մէջ, ի՛նչ որ կրնէ Թուրք
մոլեռանդ խուժանք մէջտեղ կը հանէ,
Նախարարներուն՝ այդ կիզելիմ Նա-
խարարներուն դէմ կը գրէ, Նըլաղի
բնակիչներէն հաշիւ կուգէ, առանց
ածականի կը հրատարակէ այն ա-
նունները, որոնց առջեւ իմ վա-
ռելու եւ տասը ծունկ աղօթք ընե-
լու էր առ նուագն:

Եւ մէկ մըն ալ կ'ըսեն թէ Մա-
մուլը օգտակար գեր մը կը կա-
տարէ:

Ո՛վ բաւ...:
Եթէ Մամուլը չըլլար, ո՛րու պէտք
էր եւ ո՛վ գիտէր թէ այնինչ փաշան
այսքան միլիոն գողցեր է, Նըլաղի
մէջ 30 հազար զինուոր եւ մեծ բա-
նակի մը պէտքին բաւելու չափ
ուղղամթերք եւ թնդանօթ կար-
եթէ Մամուլը չըլլար՝ Բէօր Ալին
ինչու չի յաջողէր «Հեթաբօրն» մը
յառաջ բերելու. ի՛նչու այսքան աղ-
քատանար կայս. Գանձը եւ ի՛նչու
300 հատ խոշարարները Նըլաղէն
ճամբուէին:

Մամուլը Թուրքիոյ պատուհան
է եւ իբր թէ Թուրքիոյ մէջ պատու-
հաններու սով ըլլար, նոր պատուհան
մըն ալ աւելցաւ. հացի սով կայ
Թուրքիոյ մէջ, բայց պատուհանի,
երբեք:

Ասանկ Մամուլին խերը չէն ա-
նիծեր...:

Աֆէրիմ Հագագը պէյ, աֆէրիմ
Պետական Խորհուրդ «Աթ տէ եա-
գըլըր սիդէ՛, սիլա՛ տա՛»: Ի՛նչպէս
ալ մտածեցիք եւ Մամուլի կանոնա-
գիրը չինեցիք: Ո՛վ գիտէ քանի հա-
զար կարող է ցնծացին Հագագը
պէյի որ բռնապետական... օրերու
վայել կանոնագիր մը չինէ...:

Մէկ մը որ Մամուլը սեղմուի, ի՛նչ
անհղ մարդեր կան որոնք աղատ
չունէ մը պիտի առնեն եւ հաւաքա-
բար արձանը պիտի կանգնեն Պետա-
կան Խորհուրդին՝ Գարաքէօյի կա-
մուրջին փլած կողմին վրայ:

Այդ օրը Օրմանեան մեծ հացկե-
րոյթ մը պիտի տայ, որուն ներկայ
պիտի գտնուին ամէն անոնք որոնք
Ծաղիկի մէջ իրենց բերնին... փայլ
աւին, եւ շամբանիաներ պիտի խմեն
Հագագը պէյի եւ Պետական Խորհրդոյ
անդամներուն կենաց, որ արդէն Հռոմի
մէջ իտալուհիներուն կենացը կը խմէ
կոր եղեր ամէն օր...:

Օրմանեանին իճքը բան մը չէ
սակայն Գերմանիոյ կայսեր իճքին
քով, երբ իր գեապանը այդ յաջող
լուրը հեռագրէ Պերլին: Ամէն պա-
րագայի մէջ Պետական Խորհրդոյ ան-
դամները եւ ներքին գործոց նախա-
րարը քիչէն քիչ մեւ Արծիւի պատ-
ուանչանին առաջին աստիճանին
կ'արժանանան: Ա՛լ Գերմանիոյ կայ-
սեր պիտի քանդէ նայեցէք, վեց ա-
միսէ ի վեր վար դարձած պիտի
մէկէն ի մէկ զէպի վեր պիտի ցըց-
ուին եւ կը վախճամ որ Պիւլով իշ-
խանին աչքերը հանեն:

Խեղճ Մամուլ...:

Գտնէ՛ կին ըլլայիր... բան մըն էր:
Մամուլը սեղմելով ի՛նչ կ'առնէ
Թուրք կառավարութիւնը. թող եր-
թայ կինները սեղմէ եւ տեսնէ թէ՛
եաղը ո՛ւրկէ կ'ելլէ:

Մամուլէն ելած եաղը չուտուիր
անգամ, մինչեւ երբ կինը սեղմեա
թէ՛ եաղ կ'ելլէ եւ թէ... հաց:
Թուրք կառավարութիւնը մեղմէ
աղէկ գիտէ սակայն թէ հացը ո՛ւրկէ
կ'ելլէ. Մամուլը սեղմելով, անանկ
հացեր կայ հանելիք ո՛ր...:

Երբ անգամ մը այլեւս մամուլին
ձայնը խառնադաշին մտնէ... վեց
ամիս առաջուան պէս. երբ յօդ-
ուածները լաթաթէսի մշակութեան
չուրջ գտնուան եւ չա՛տ չա՛տ նշան
Գալֆայեան որթատուկներուն եւ չե-
րամներուն վրայ յօդուածներ գրէ,
երբ Աղլակի տեղ... Փոռնը հրատա-
րակուի եւ Ալնուսին տեղ... Զա-
մուրճի պատուելիին պէս վերապատ-
ուելի մը գումարէ միթիկները,
երբ... Յ. Ալիիար փնտուռի...
վեց ամիս չփնտուռէն վերջը, երբ
Զօհրապ Աստուածաբանական յօդ-
ուածներու սկսի եւ Զապէլ Եսա-
եան... գրէ տանթէներու պատ-
րաստութեան եղանակին վրայ,
երբ Բաքիմ... սկսի իր բարեկամնե-
րուն հանգիպել, երբ Արիկ Մու-
պահեանեան մեղայագիր մը գրէ...
նախարարութեան, երբ «Սէրպէտի»
կանոնաց յատուկ թերթ մը ըլլայ եւ
«Հուգուգը ումուփիյէ» մանկանց
յատուկ, երբ «Ծաղիկ» կրօնաթերթի
փոխուի եւ «Վալուօ» արհեստագի-
տական իրերու, երբ Սրմաքէլիան
լեան վարդապետ ձեռնադրուի...
Արմենակ Արքեպս. ինձեհանէ եւ
Յակոբ աէր Յակոբեան... չիլիկի-

բուժան սկսի, երբ Գեղամ Բարսեղեան և Ծառաբէ Միսաքեան... չիւի-
նիւթիւն ընեն և Յ. Ծառաբէ...
ախրացութիւն, երբ Զարգարեան
յօդուած գրէ... Համապատասխան
և վարդգէս... Սրբոյն Կիպրիանոսի
վրայ. երբ Տրգրան Զաւէն Աղթա-
մարայ կաթող. փոխանորդ կար-
գուի և Գարեգին Կողիկեան լուսա-
րար, երբ ասքիթ. Տաղաւարեան չա-
քաթիւր երեք անգամ ելլողը երթայ
... ձեռք պագրելու և հաց ուտելու
համար, երբ Հ. Արամեանց սափի-
չութեան սկսի և Ղազարոս Զպլաք-
եան... բեռնակրողութեան, երբ Դա-
հան Նաթալի... Խարեհրդի առաջ-
նորդ բնարար և վաճառ թէ-
քէեան... Եղիպտոսի, երբ
Անձիւտ Բիզա, օրինակի համար
Երևորդ ճաշի հրաւիրուի և ոտքէ
ուտելով թոնաւորուի ու մեռնի և
միւս օր փոխանակ «Թոնաւորում
Երևորդի մէջ» բնելու, սկսինք գրել
«Կաշառանական զեկուցում. Անձիւտ
Բիզա մեռաւ սրտի հիւանդութեան
մը հետեւանքով և յուղարկուորու-
թեան ծախքը ձեռքը Հիւսնայունէն
պիտի վճարուի Կայս. Իրաւի մը
համաձայն», երբ վերջապէս բոլոր
լրագրողները կանչին և ալ այս աշ-
խարհին մէջ մնալիք կը բաւէ ըսե-
լով վեց գիրը դնեն՝

Ո՛հ այն ատեն բոլոր ծառանքե-
րուն, փեսաներուն, որդիներուն և
չողագաններուն լեզբը տեղը կուգայ
և Մամուլն ալ... ոտքերը կը տնկէ:

Զարմանալին այն է որ Իզմիրի
մէջ ալ Մամուլ մը կայ. կ'ուզէք
որ Հրանտ Մամուլեան այս աշխարհ...
վրան առնէ և ինծի դէմ յօդուած
մը գրէ...:

Աշխարհք է, չեղած բան չի կայ,
գոնէ աճապարէր գրելու, քանի որ
դեռ Մամուլը չէ սեղմուած:

Սիրտերնիդ սեղմուեցաւ կար-
ծեմ, Մամուլին սեղմուելուն առթիւ
գրուած այս յօդուածէն:

Աւելցնեմ սակայն որ մեզի այլեւս
մարդ չի կրնար սեղմել, որովհետեւ...
եղի չեղար մեզմէ:

Գ. Բ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

ՏԱՐԻՆ

Թատերական տարին. — Այս
տարի հակառակ անձրեւ շատ չգա-
լուն, հրապարակը ողողուեցաւ...
դերասաններով. թատերական խում-
բերը ա'յնքան շատցան որ հայկական
բառարանին ամբողջ բառերը չբա-
ւեցին իւրաքանչիւրին յարմար անուն
մը որոշելու: Վահրամ Փափագեան
քանի մը անգամ խումբը կազմեց,
շատեր կ'ըսեն թէ Օթէլլոն խաղաց,
ոմանք կը յարեն թէ Օթէլլոյին հետ
խաղաց, իսկ ուրիշներ կը պնդեն
թէ... Օթէլլոյին համբաւին հետ
խաղաց: Ենովք Ծահէն և իր ըն-
կերները քանի մը անգամ Զքսեն-
ցան, յետոյ Մսուրացիանուքեան

սկսան: Կարապետ Գալֆայեան Համ-
լէթը խաղաց. թէ՛ ինք Համլէթի
մէջ մեռաւ և թէ Համլէթ իր մէջ
մեռաւ: Նորիկեան Սանդուխտ Կոյսը
նահատակեց. Արարատեան խումբին
դերասանները Արշակունեանց թա-
գաւորութիւնը կործանեցին: Գող-
թան խումբը՝ Արշակ Բ. ր յիւսարա-
ցուց: Ուրիշ շատ մը խումբեր գի-
տաւորներու նման ելան ու անհե-
տացան: Աստուած մարդկութեան
այս աշխարհներ վրայ խղճալով
Արէլը դրկեց... իր խումբով, որոնք
ժողովուրդին թէ՛ արցունք թափել
տուին և թէ՛ ստակ:

Երաժշտական տարին. — Այս տարի
երաժշտութեան աշխարհին մէջ...
երաշտութիւն կը տիրէր: Սինանեան
քանի մը ազգային երգերու վրայ...
իր կնիքը դարկաւ: Բարեկեան քանի
մը եղանակներ յօրինեց... քննադա-
տաւը նուագուելու համար: Կրօնա-
կան ժողովի Պատ. անդամները, որ
մեծ մարդեր ըլլալ կ'ուզեն, ուզելով
հրաշագործութիւն մը ընել, ամառ-
ուան մէջ ձիւն բերին... եռաձայնի
գլխուն: Այս տարի Լէպլէպիճի Հօր-
հօրն ալ բեմ հանեցին որ... օրօրի
չափ յաջողութիւն ունեցաւ:

Գրական տարին. Տիրան Զրաք-
եանի Ներաշխարհը սկսաւ հայերէնի
թարգմանուիլ: Բանաստեղծներուն
մէջէն աղիկ սակեր մը գրականու-
թեան գլխուն նոր... քերթուածքներ
տուաւ և առանց այնան սպասելու
գարնան սկիզբը... այգեկութիւնսկաւ...
նաեւ ժամանակ գտաւ գլուխ դաւ-
ցնելու. Փերուշան բանաստեղծ մը
բանաստեղծութեան մահը գովեց և
անոր դադարին վրայ պատկերի ծա-
ղիկներ, իրիզանքեմներ ցանցեց:
Գրականութեան չրափն մէկը իր
ներաշխարհին մէջ թափառելէ ձանձ-
րացած նօճաստան մտաւ: Ծերունի
բանաստեղծ մը, որ մինչեւ հիմա
անհեմի կը կարծուէր, Պառնասէն
վար իջնել զիջանեցաւ: Հիշեք Սե-
րունի մթնշաղին տակ սկսաւ բա-
նաստեղծութիւն ընել: Ռ. Սեւակ
իր հազուատներուն փոխին թոթուե-
լու զրադած ըլլալով բան մը չկրցաւ
արատելել: Ետ. Գոյնանեան արեւ-
ւելիի թոյնը դիտելէն աչքերը չա-
ցան և ու է բան չարտագրեց:
Վայրի բանաստեղծ Լ. Էսաճանեան
Եղիա մարգարէին կառքին ետեւէն
ապրահար նայեցաւ երկար ատեն:
Արտ. Յարութեանեան արդէն իր
քնարը շատոնց լքած, երկունքի մէջ
մնաց առանց նոր պտուղ մը ար-
տադրելու: Տիգրան Զէօկիւրեան մա-
ղբը այնչափ մեծցուց որ սկսեց
ստիպուած էր քիթն ալ մեծցնել:
Վահրամ Թաթուլ փորձ արագրելու
զրադած ըլլալով... չփորձուեցաւ
բանաստեղծութիւն գրել: Լեւոն Լա-
րենց իր դրախտի երգերէն Պոլիս
ալ սկսաւ քել, բան մը որ... շատ
չքնեց: Հրանտ Ասատուր որոշեց իր
թանգարանը (հաւաքածոյ... հինցած
բաներու) շարունակել: Սիպիլ այս
տարի ամուլ մնաց:

Գիտական տարին. — Այս տարի
շատ մը նոր գիւտեր ելան. իբր
ընէ բերելու միջոց՝ Լիւիզները սկը-

տան յանձնարարել... Ուղղութեան
քերթուածները. իսկ հիւանդներուն
փոխունքը բերելու համար գիտուն-
ները յարմար դատեցին... Նաթա-
նին կամ Տիգրան Զաւէնի յօդուած-
ներէն մէկը կարգացնել:

Երգիծական տարին. — Յ. Ալիխար
առաջին անգամ քննեցաւ, սակայն
վերջը անյաջողութեան ժառանգելով
Ս. Բ. Գէն սկսաւ: Փողոցի Կալիօզ
մը և բարի Ծաղիկ մը ձեռք ձեռքի
տուին: Վ. Փափագեան բառարանին
բոլոր բառերը սկսաւ փորձել և Զիկ-
Զակ երթալէ վերջ, Ֆոնոֆոնոյա-
պատ փէշերու տակ ապաստանեցաւ:
Գաղափարական տարին. — Պուլկա-

րիա, որ կախուած էր, ինքզինքը
չը կախուած հեշակեց. Վիկէլմիայ-
սեր պիկերը վար դարձան և մեծ քի-
թերը կոտորեցան, Բիզանդ Գէշեան
Լա Հէյի իրաւարար ատենին նախա-
գահ ընտրուեցաւ և Արշակ Զօպան-
եան քարտուղար: Պօսնա-Հէրսէք
անուն բիւրօքը Աւստրիացիները կե-
րան, մէկ բոսթօնին մէկ միլիոն ոս-
կի տալով: Եղիա Սուրբիկեան Ռիւ-
թէրի գործակալ եղաւ... Աստուած
տեսաւ զարմացաւ: Էտուարտ Թա-
գաւոր Թուրքիա բառը առաջին ան-
գամ ըլլալով բերանը առաւ: Պապը
Հայերը սիրեց և Թուրքիոյ գլխուն
բաւական ձիւն... եկաւ ամառուան
մէջ:

Տնտեսական տարին. — Բուստան
գինը քառասուն վարայ վար դրաւ
և կովու գլուխները չորս զրուշի
ծախուիլ սկսան: Պոսեցիներուն գը-
լուխը որ պատապ հասկերու կը նմա-
նէին, բանախօսութիւններով լիցուե-
ցան: Հացը 50 վարայի սկսանք ու-
տել: Իրարու միս ուտելը արդէն
նախորդ տարին վարժուած ըլլա-
լով, իրարու գլուխ ալ կերանք:
Միսերուն գէմ իրեւ. աւատրիական
ապրանք պոյֆօրատ բրինք և աւրա-
տրիական խաղախաղեր գնել սկսանք:
Պատրիարքարանի և Մայիլի սըն-
տուկներուն ծակերը կարելի չեղաւ
գոցել: Ատաղձին գինը վրայ դրաւ,
որովհետեւ կարգ մը գլուխներ սկը-
սան փայտէ շինուիլ. իսկ մէջե
օ-
տուկին գինը իջաւ, քանի որ կա-
մուրջին դրամահաւքները աւելի
ածան գինով սկսան ծախուիլ: Գա-
շէրի պանիրը սուղցաւ: Պուլկարիոյ
դէմ պոյֆօրի մը հետեւանքով: Ա-
ւստրիական ամէկ կարգի ապրանք-
ներուն վրայ մեծ գործ չի կայ, թէ և
նոյն երկրին կիները միշտ գործի
վրայ են:

ԸՆԴԵՐ ԿԻՆՈ

(Որ պիտի շարունակէ)

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԱՌՈՐ ԱՆԵԼ Է

Կը խնդրուի Ծաղիկ - Կալիօսի
բաժնեգիրը չլնարող Գեղապաշի
Եպիկ. Գեղեհ, Գեղաւունքի վեգ. Գեղեհ,
Արժանաւունքի Գեղեհ. Ազնու-
տուք, Վսեմաւունք, Մեծապաշի, Մե-
ծալարգ Էմ. Գեղեհաւունքեհ, որ-
պէսզի առաջին փօսով հանին դրկել
իրենց բաժնեգիրները:

Նաեւ խնդրելով կը խնդրենք
մեր դադարեալ գործակալներէն,
որպէս զի իրենց հաշիւներ փակեն.
խաթը եւ նե բաւական քիմի:

Երբ մեր միւս գործակալներէն ալ
հանին փառա դրկել մեզի իրենց
հաշիւէն, շատ գոհ կ'ըլլանք:

ՈՐԱՆՆ ՏԱՐԵՆՈՐԵՐ

ՅԱՆՎԱՐ

Տաքերը կը սաստկանան: Աղէք-
սանդրիոյ Պողոսեան վարժարանի
ուսուցիչները խնդրութեան նշաններ
ցոյց կուտան:

Դպրոցական ծրագրին պատրաս-
տութիւնը առաջ կը տարուի: Բարձ-
րագոյն կարգի աշակերտներու
գաղտնի քննութիւնը կը կատարուի
և զարմանքով կը տեսնուի որ մե-
ծամեծ յառաջդիմութիւններ ըրած
են:

Տղաք անսխալ կերպով կը հեգեն
ճը ա ճա կը ա տը ճա կատ: Ասոր
վրայ Բաղաքական Ժողովը ճաշ մը
կուտայ ուսուցչական մարմնոյն և
տնօրէնին ամսականը երեք ոսկի
կ'աւելցնէ:

Գահիրէի «Արշայոյս» և «Աւել»
թերթերը կը ձուլուին «Լուսաբեր-Ա-
րեւ» ի հետ և մեծածաւալ թերթ մը
կը սկսի հրատարակուիլ «Լուսաբեր-
Արեւ-Արշայոյս-Աւել» անունով:

Ընթերցողներու սով մը կ'սպառ-
նայ բնաջինջ լնել Արեւելեան Մա-
մուլը:

★

ՕԳՈՍՏՈՍ

Պոլոյ վարժարաններուն հաղա-
բաւոր ծնողքները կ'ուրախանան
թէ՛ երեք տարուան մէջ իրենց տը-
ղաքը հսկայաքայլ յառաջդիմութիւն
ըրած են և թէ քերականին գրիթէ
կէսը սորված են: Յառաջդիմագոյն
աշակերտը Ատեան կը կոչուի և
«աչք» ու «ճակատ» բառերը հեգելով
անսխալ կը կարգայ: Բուռն ծափա-
հարութիւններ տեղի կ'ունենան:
Ուսումն. Խորհուրդը յուղումէն և
ուրախութենէն կը մարի. հակառա-
կորդները կը դատապարտուին վեց
ամիս՝ «Կիլիկիա» անուն առողջա-
պահական թերթը կարդալու:

Տնօրէններու ամսականները կ'ա-
ւելնան:

Բազրատունի պատուելի յուսա-
հատութենէն ինքզինքը հօրը կը
նետէ և գլուխը խոշոր քարի մը
գալով կտոր կտոր կ'ըլլայ սակայն
յետոյ կը փակցնեն:

ՍՏՊՅՏ. ՀԱՆՏ. ՆՈՅՄ, ԳՆՏԼ.

Ընդհանուր ոգեւորութիւն և միա-
բանութիւն, Սեպտեմբեր, Հոկտեմ-
բեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիս-
ներուն, և ինչպէս վերը կը տեսնուի
կը միանան իրարու: Հին Հնչակեան-
ները կը միանան նոր Հնչակեաննե-
րուն: Աղգային ուսմկաւար աղա-
տական սահմանադրական կուսակ-
ցութիւնը կը միանայ «Միութիւն և
յառաջդիմութիւն Գօմիթէ»ին, Սա-
րայ Պուռնին կը միանայ... Մօտայի,
Կասպից ծովը Սև ծովուն և Ենովք
Արմէնը... Փալազաշեանին:

Օսմանեան Խորհրդարանին մէջ
վիճաբանութիւնները կը սկսին նը-
վաղ տղայական ըլլալ և շատ մը
լուռ երեսփոխաններ կը սկսին կա-
մաց կամաց լեղու ելլել:

Տեղ տեղ հրաշալիքներ կը պա-
տահին, ինչ որ ենթադրել կուտայ
թէ աշխարհի վախճանը հոսնաւ:

մօտ է: Օրրնակի համար Հրանտ Ա. աստուր կը հրատարակէ Յ. Պարոն-եանը կենսագրութիւնը Փաստաբան Ինճէեան վարդապետ կը ձեռնադ-րուի և Արմաշու Վանահայր կը կարգուի, փորագրիչ Ջգոն կը սկսի լոյս ընծայել իր «Խարաղան»ը յօգուտ կառապաններու, Տիգրան Չաւէն իմաստալից յօգուածներ կը դրէ, և Սուրհանդակը կը գոցէ, Հայ բո-ղոքականները վերջապէս ազգապետ մը կ'ունենան, Երուսաղէմի վանքին խնդիրը կը լուծուի և Արարհամ Այվազեանի կարեւոր մէկ աղբիւրը կը ցամքի:

Արտասահման մնացած շատ մը հերոսներ կը պատրաստուին Պոլիս գալ այս լուրը իմանալով Պոլիս զբո-նուող հերոսները դող կ'ելլեն, խոր-հելով թէ իրենց «բապտիզմները բաժը պիտի ելլեն» և հերոսական ընդհա-նուր ժողով մը գումարելով, Յ. Ճանկիւլեանի նախագահութեան տակ, կ'որոշեն արտասահմանի հերոսներուն պէմ պայքոթ հրատա-րակել:

ԵՐ. ՕՏԵԱՆ

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԱՐԳ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ
ԳՈՒՐՇՈՒՆԼՈՒ ԽԱՆԻ ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԻՃԱՆ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

ՊԱՇՏՈՆ

ԱՍՏԻՃԱՆ

Բռնապետութեան Սեւ Արծիւի քարծրադոյն աստիճանը՝ կեդր. Բա-ղաք ժողովոյ անդամներուն, ի վարձ իրենց ճիշդ իմութեան:

Երգիծաբանութեան առաջին աս-տիճան՝ և Հայրենիք պատուանշանին տկանակու մեծ խաչը իր ոսկեայ չղթալով, մեր կայսրութեան առաջին խորհրդական Երուսաղէմ իսաա Օտ-եանի:

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Ձառդ պատուանշանին տկանա-կուտ պատուանշանը Մէկ-Մարդ Բի-թեանին և Ռուսիոյ ու Գերմանիոյ կայսրերուն:

Տարօնի գաւառ պատուանշանին Ա. աստիճանը՝ Մուշի Գեղամին, որ այս առթիւ ստացաւ նաև «Գեղու-նի»-ի աստիճանը:

Օրեակ պատուանշանին ճաճան-չաւոր խաչը մեր պալատան աղօթա-սացներէն՝ Տ. Յուսիկ արքեպս. Մէհ-րապեանի և Տ. Նսայի արքեպ. Տա-յեցիի:

Գեղանի վարդապետ պատուանշ-նանին Բ. աստիճանը՝ Հ. Սահակ Տէր Մովսէսեանի և Հ. Թովմաս վրդ. Կէտիկեանի, որոնք կայսրութեան կրթական նախարարութեան խորհրդ-դալան անդամութեան բարձրացան:

Շիֆ - ճղայ պատուանշանին Բ. կարգի խաչը դեր. կոմս Գերոյէ Պա-ղիկեանեանի:

Պապիկ իշխան պատուանշանին տկանակուտ սուրը մեր կայսրութեան

դերասանական համալսարանին դեր-անօրէն բրօք. Հայկ տը Փափաղ-եանի:

ՊԱՇՏՈՆ

Գատըգիւղի արտասովոր և լիա-ղօր դեսպան անուանուեցաւ Էտ-ուարտ Թադաւորին նախկին սենե-կապան՝ Լորա Օննիկ Չիֆթէ Սարաֆ: Կայսրութեան մեծ դրամատան Ընդհ. Տնօրէն նշանակուեցաւ դեր-կոմս Արամ Գալէնտէր, որ հրաժա-րած էր Տէնէկ Մատենի տէֆթէր-տարի պաշտօնէն:

Ֆէրիտիէ գաւառին նախկին ան-ուանուեցաւ Էսկիէհիւրի նախորդ-նախկին Մուսիկուտէ վրթանէօ էֆ.:

★ ★

Նախագահական Շնորհ

Վեհ. Նախագահին մասնաւոր բժիշկ և պիսաւոր տղոց յատուկ Բանագործի Կիւսնդանոցին բժշկա-պետ առաջին ֆէրիք Տօքթ. Պօղո-սօֆ փաշա, նախագահական Իրա-տէի մը համաձայն, Վեհ. Նախագա-հին մեծավայելուչ բարեւները հա-ղորդեց կամուրջին վրայ գրաւաճա-ւաքներու հետ տեղի ունեցող արիւ-նայի ճակատամարտին մէջ վիրա-ւորուած և նոյն հիւանդանոցը դար-մանուող սպաներուն և զինուորնե-րուն: Բոլոր սպաները և զինուոր-ները միահաղոյն աղօթքներ ըրին Նախագահին արեւշատութեան հա-մար, յայտարարելով որ ամէնքն ալ ամէն ժամանակ, գիշերը անկողնին մէջ խոկ, պատրաստ են իրենց ան-ձը զոհելու Վեհ. Նախագահին: Բոլոր հիւանդները յետոյ «Պիգիմ Բէյիզ չօգ եաշա՛» գոչեցին:

★ ★ ★ ՊԱՏԵՐԱՋՄ. — Քաղաքա-կան հորիզոնը հնազնեակ կը մթաքնի և մօտալուտ պատերազմի մը հաւա-նականութիւնը ժամ: ժամ իրակա-նութիւն մը դառնալու կը սպառնայ:

Վատահօրէն կրնանք ըսել թէ մօ-տերս պիտի ծագի «Յիւսէփ-Թրա-կան պատերազմը», որուն գլխաւոր, պատճառներն են Երուսաղէ Օտեանի եւ Միքայէլ Կիւրճեանի միջեւ ծա-գած վէճ մը:

Պատերազմի ընդհանուր հրամա-տար կ'ըգուած է Լեւոն Նիշմանեան որ այս Կիրակի Պոլիս կը հասնի ռազմական դորձողութեանց սկսելու համար:

Մեր ընթերցողներուն կը խրա-տենք որ սպառազինեն իրենց քսակ-ները, ամէն պատահականութեանց առջեւ պատրաստ գտնուելու հա-մար:

Ռազմական մանրամասնութիւն-ները յաջորդ թիւերով:

★ ★ ★ Սուլթանին հիւանդութիւ-նը սաստկացած է կ'ըսէ Նայէ ֆրաէ Բուսա: Երեւակայեցէք Սուլթանը մեր քիթին տակն է և հիւանդու-թեան սաստկանալուն լուրը Վիէն-նայէն կ'ըստանանք: Ասկէ վերջ երբ օրինակի համար լսէք թէ այսինչը իր աթոռէն վար են աւեր, մի հա-ւատաք, նոյն իսկ եթէ ձեր թաղին մէջ ալ պատահած ըլլայ, այլ սպա-

սեցէք որ լուրը ասկէ հետագայուի Վիէննա, հոն հրատարակուի, փոս-

Պան այդ թերթը մեզի բերէ և մենք ալ թարգմանաբար ձեզի տանք: Թուրքիոյ մէջ երբեք ուղղակի բան չիմացուիր, ունեն ըսն անուղղակի կերպով կ'իմացուի:

★ ★ ★ Օրթագիւղի ամէնէն շի-րին երիտասարդներէն Հայկ Փա-փաղեան, որ Պապիկ իշխանին կեղծ տղան թատրոնէն դուրս վռնտած էր, կը լսենք թէ՛ Արեւեան խումբին մէջ պիտի մտնէ՝ 15 ոսկի ամսականով: Անան Պ. Արմէնեան ոտքը տեղի առ, որովհետեւ Պ. Փափաղեան... Յոսանցի դերին մէջ սքանչելի է եղեր:

★ ★ ★ Սկիւտարի մէջ Միւսթիւն և Յառաջիմութիւն անունով երի-տասարդներու ակումբ մը կայ, 50 հոգի են ասոնք և 50 հոգին ալ կարգուելիք երիտասարդներ են: Ասոնք Արեւեան խումբին վերջին անգամ հացկերոյթ կուտան, որուն կը հակառակին մէկ քանիները մա-նաւագ Յովսէփ Պէղազեան անուն մանչուկ մը: Յայտնի չէ թէ ինչո՞ւ կը հակառակի, միայն թէ ըսողներ կան որ կամ իր բաժինը եղող երե-սուն զորւոր չվճարելու և կամ իր գերդաստանին անդամներուն բարի սովորութեանը համեմատ... հնգկա-հաւութիւն ծախելու համար:

★ ★ ★ Անցեալ շաբթու մարդու-կին մէկը որ Բարեբգի մէջ վարժա-պետ է եղեր, Վահան Գօգմանեան, Մանգուլմէին կ'երթայ և ինքզինքը իբրեւ Մուշի Գեղամը կը ներկայա-ցնէ և Մանգուլմէիները որոնք խօս-քով լօյօ չեն կլլեր, փառաւոր մը կը կլլեն: Զէյթունի Պապիկ իշխա-նին կեղծը ելեր էր, Գեղամինն էր պակաս: Վաղը միւս օր եթէ ձեռ-քերունք գայ ինծի ալ պիտի կեղծեն: Ոստիկանութեան նախարարը պէտք չէ՛ որ այս կեղծարարները ձերբա-կալէ:

★ ★ ★ Կեդրոնական վարժարանը իր հին քարձրութեան վրայ դնելու համար Խնամակալութեան սնդաւա-ններն Տօքթ. Թիւլեան առաջարկեր է իբրեւ անօրէնութեան ընտրելի՝ Մաքրիգիւղի Հայկական... պէպէ-քարանին անօրէնը՝ նորին պայծառ իմացականութիւն... Պօղոս Պէղաղ-եան: Սա Պէղաղեան մակնաշունչն իւր մը տեսնելիք չունինք վիսակ-շում:

★ ★ ★ Գում-գարուի մէջ նոր պարահանդէս մը պիտի տան ի մօ-տոյ: Սակայն ներկաներուն խնդրան-քին վրայ, պարահանդէսէն ներս չի պիտի առնեն եղեր Հ. Փերեզակեանը, որ ինքզինքը Բարիզի ազգերի մը տեղ դրած է եւ ամէն տեղ խօթել կ'ուզէ իր քիթը:

★ ★ ★ Ստոյգաւորութիւն ի բացանք որ Սրմնեակ Ինճէեան ոչ թէ Աղգին օգտակար ըլլալու համար վարդապետ եղած է, այլ Պատրիարք մը ըլլալու հաստատ մտադրութիւնով: Աֆէրիս Ինճէեան գէշ խելք չէ, աշխարհա-կանութեան մէջ աննշմար պիտի անցնէ իր դոնէ եկեղեցականութեան մէջ... Զրաւունք մը կարգադրուի մը կրնաս ըլլալ: Ի՞նչ կը տեսնուինք:

★ ★ ★ Խօսք մը այն Պէշիքթաշիին,

որ ստորագրած էր Մարտի 1-ին ինչ երբ քու պիտեք Պէշիքթաշի նախ-կին սիւլքօր քոմիսիը Հայիմ էֆ. կարեր է՝ գրպանէք ելած մկրատով մը: Այժմ ոչ մէկ ինչ կրնանք ը-նել. եթէ ձեռքէք կուգայ, դո՛ւն ալ անորը կտրէ և հայիւր փայէ:

★ ★ ★ Ռոտոթոյնները մեծ ու-րախութեան մէջ են տեսնելով որ իրենց մէջ ալ մեծ հանճարներ, բան-ճարներ ու շողգամներ կան Անանի չէ՛, ո՞վ դու Արմէնակ Խորախանա-լօղեան (ներողութիւն Գարանֆիլեան ըսել կ'ուզէի): Ինծի նստակ գրեք էիր, 23 հոտ տառախախերով, որով կսպանայիր զիս «Կայծեր» ա-նուն «Թերթուկիդ» մէջ լուալ: Խեղճ տղայ քառասունոցիդ ալ չ'եղքար: Զաւակ քիչ մը ինք-դնքիդ նայէ և քառասունոցիդ պահէ որ Ռոտոթոյնի Օրիորդներուն ճախա ընես... Թէև, որչափ որ գիտեմ թէ քիտաղցի Օրիորդները... կուլան եղեր վրադ:

★ ★ ★ Մննդեան օրերուն Գարա-թաշի Ս. Կարապետ եկեղեցին կեր-թայ մեր թղթակիցը և ինչ տեսնէ. բակին մէջ կ'որ սեղանի մը վրայ 2 գեղուհիներ ձերբակ թեւերին սթե-տած մաս կը շինեն: Ոտքերիդ պազներ սիրելի Տիկիներ այդ մա-սէն մեզի ալ մաս մը հանեցէք, իզ-միրի Միւստա աղբարը կը քննանայ, ինչ կ'ընէ արդեօք:

★ ★ ★ Բերայի Ս. քարոզիչը մե-զի քաթ մը գրած էր և մենք ան-կողմնակալութեամբ հրատարակած էինք: Շատեր կը կարծեն որ Հմայ-եակ եպս. մեզի սնանկ քաթը զոր-կած չէ: Չը հաւատալու ինչ կայ, Հմայեակ եպս. կրնայ հաստատել և ցոյց տալ որ ինք միշտ տէր է... «Գոհար» արժանիքներու:

★ ★ ★ Ռոտոթոյնի Տ. Բարթողը որ ապտակ մը կերցոցած էր տեղուին ժամկոչին, բէշիվանութեան դառն-թացը մը բացեր է քաղաքին մէջ: Տեղացիք սկսեր են հանրագրութիւն մը պատրաստել և Տ. Բարթողի տեղ առաջնորդարանին քարտուղար կար-գել ժամկոչ ախպարը, ի փոխարի-նութիւն կերտած ապտակին: Ո՞վ Ռոտոթոյններ հիմայ հաւատացի որ Սահմանագրութիւնը ձեր քաղաքին մէջ ալ մտեր է:

★ ★ ★ Սուլթանը կը վախնայ եղեր. չեմ գիտեր թէ ինչչէն կը վախնայ: Արդ որպէսզի այլևս չի վախնայ պատերազմական նախարա-րէն վեց հատ թնդանօթ ուղեր է: Նախարարը գացողին վեց գէրը գրեք է. ճիշդ այն վեց գէրին պէս, որ գրին Ալիփարի և Հիւրիեանի:

★ ★ ★ Խորհրդարանին անգամ-ները ամէն գործ աւարտեցին և գար-նան Լոնտոն պիտի երթան եղեր՝ չը-նորակալ ըլլալու համար: Չե՞ս ճա-թիր...:

ՎԱՂԸ «ՎԱՂՈՇ»

ՊՐԵՍԵՆՏԵՐ Ա. ՊԵՐԵՇԵ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԳՈՒԱՆ

«ԾԱՂԻԿ» — «ԿՎԱՌՈՇ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
(«ԲՈՒՆԱՅԻՆ»-Ի ԶԱՓ ԳԻՍՏԱԿԱՆ)

Ծաղիկ եւ կապուս միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրուց: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ տարեկան 45 դրուց:

Ծաղիկ եւ կապուս միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրուց: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրուց:

Ծաղիկ եւ կապուս միասին, Արշակունիի համար տարեկան 52 ճր. վեցամսեայ՝ 13 ճր.: Ծաղիկ կամ կապուս՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ճրանք:

Ոչ ոք զօրով բաժանեցէ՛ք կ'արձանագրուի:
Երամի կանխիկ չարկոցներ եւ մեր փառանք ուսողները կ'անցնենք եւ... կը խայտառակենք:

20^{րդ} ԳԱՐՈՒ
ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ԱԼԷԼՈՒԻԱ՝
ՏԱՍՆԵԱԿ ԻՄԱՍՏԱՍԻ ԱԿԱՆ
Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆԻ
Գին՝ 7 1/2 դրուց

Կեանքի, տինգերի, Աստուծոյ վրայ իմաստասիրական շինիչ տեսութիւններ եւ բանաստեղծութիւններ, որոնք այս անգամ բարձր վկայականներ տուած են Խրիսեան Հայրիկ, Ս. Պապը, Դուրեան եղիշէ եպս. Յովհաննէս փաշա Սազըղ եւ նմանիք: Կը ծախուի Կ. Պոլիս Պալենց գրատունն եւ հեղինակին քով:

Կարգալ եւ կեալ



ՎԱՅԵԼԶԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՆԲ Կ'ՈՒՋԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՏ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼՅՏՈՂՆԵՐԸ

ՎԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏԻՈԱՇ

ՀԵՍՏՈՒՄԸ 1860

ԱՄԵՆ ԱԶԻՆ

ԳԵՂԵՑԿԱՅԵՆՈՒ ԶԻՆՍԵ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԴՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ռշադրութիւն Ընկէ —

— ՎԱՋԱԱՌՆԻՇԻՆ եւ Մերժեղ —

ԿԵՂՄ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՁԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ, ՄԵՆ ՓՈՂՈՑ

Այս տարի Բարեկենդանին ուր պիտի երթաս նստելու:

— Ուր պիտի երթամ. Հաճի Սարիմին պիտի երթամ նստիմ:

Աղէկ ըսիր, աղաք, էն չնորքով խանութը նորէն Հաճի Սարիմն է:

Հե՛մ ընտանեկան հե՛մ ալ մաշուր:

— Հապա անուշեղէնները:

— Այս տարի Բարեկենդանին Հաճի Սարիմի երկու աղաքը որոշած են որ մինչեւ լոյս բաց պահեն իրենց խանութը՝ պտոյտի ելլող ընտանիքներու եւ պալօէ դարձող բարեկենդանիներու համար:

Օղի եւ գարեջուր պիտի ըլլան:

— Հարկաւ, ասկէ զատ սքանչելի ինձէ սաղ ալ պիտի ըլլայ:

Ուրիմն ամէն մարդ բարեկենդանի իրիկունները Հաճի Սարիմին:

ԾԱՂԻԿ ԿՎԱՌՈՇ

ՎԵՐԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

4800Ն 19 36վ. 23 1909

ՓՅՔԷ. 15/ (Լ. Ե.) ԳԻՏԱԿԱՆ

Հանութեան համար մասնակցելու

Լու իրաւունք:

Անա՛ քսան (20) Էմիլիոյի Թիւերը

25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	21237
106602	271039
106605	286163
106607	334229
127106	334230
152940	334231

ՄԱՊԵՔՍ. ՕՇԱՐԱԿԸ



Ապիսի օշարակը լաւագոյն ու առաջնակարգ դեղն ու դարմանն է հազի դէմ, ընդունուած եւ հաստատուած Եւրոպայի բոլոր մեծամեծ բժիշկներուն կողմէ եւ կը գործածուի բոլոր հիւանդանոցներուն մէջ, Գործադրութեան եղանակը կը զրկուի դեղին հետ միասին:

Ձորս հազարէ աւելի բժիշկներ հաստատած են այս օշարակը՝ իբր հազի միակ ու լաւագոյն դարման:

Կը ծախուի Բերա, Պոն՝ Մարչէ, Գո օրէրադ՝ թիվի Բերայի, Ղալաթիոյ, Պոլսոյ ու Կատրաքի դի մասնաճիւղերուն մէջ, ինչպէս նաեւ բոլոր կարեւոր դեղավաճառներուն քով:

Ամբողջ Թուրքիոյ համար միակ կեդրոնատեղի-գործակալութիւն՝ Ղալաթիա, Մեծ Միլլէթ խանքի 33:

Գին. Պոլսոյ համար մեծ շինք՝ 24, պղզտիկ շինք՝ 13. Գաւառներու համար մեծը՝ 30, պղզտիկը՝ 17 դրուց: Թղթարի ծախքը մեր վրայ:

Գաւառական յանձնարարութիւններու համար պէտք է գիմել ուղղակի Ղալաթիա, մեծ Միլլէթ խանքի 33:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

«ՆՈՐ ԴԱՐ»

Բերա, Սօջիէրա Օքերայա Իրախմայի Սրահը

Կիրակի գիշեր 1/14 փետր. ժամը 9ին (ը. Ե.)

Պարի ուսուցիչ Տիար Խաչատուրեանի կողմէ խիստ փայլուն եւ սիրուն անակնկալներով կազմակերպուած զուտ ընտանեկան այս շքեղ երեկոյթը վայելելու փափաքողները փութան իրենց տոմսերը գնել — ինչ որ արդէն սպառելու վրայ է — Բերա, Կալաթիա Սէրայի անկիւնը Պ. Օհրիկեան ծխավաճառատունը եւ կամ նոյն երեկոյին պարահանդէսի կիջէն:

Տոմսի գինը 20 զր., կիսերու համար մուտքը ազատ է: Պարահանդէսը անդիմախ ըլլալով, կը խնդրուի հազուադէպ մասին չլերանալ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՄԹԻԿ

Ձմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լաթիկները եւ լաւ լատիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահկանացիներու համար:

Լաւ լաթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք եւ չնորհքով մարդիկ էք: Արդ դիմեցէ՛ք, գացէ՛ք առէ՛ք Ֆրանսական այն լաթիկները որոնք շատ քիչ մնացած են եւ 4 ամիս կառանքիով կը տրուին: Անցեալ տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շերպիքիին խանութը փոքրաքանակ, իսկ Ալըր էֆ. խան, Նո. Յի Պողոսօֆի քով կը ծախուէր մեծաքանակ. հիմայ թէ մեծաքանակ եւ թէ փոքրաքանակ կը ծախուէր Պոլիս, Ալըր էֆ. խան, Թիւ Յի, տիար Միլլէթ Պողոսօֆի գրասենեակը:

Ո՛վ Ծաղիկի եւ Կապուսի ընթերցողներ, վաղեցէ՛ք տիար Պողոսօֆի քով եւ անպատճառ գնեցէ՛ք հատ մը:

Բերայի յաճախորդաց դրութեան համար, մասնաւոր կանանց, սոյն ապրանքներուն ամէն տեսակներէն կը դառուի դերձակ Տիար Երուսաղ Միլլէթեանի քով, Կալաթիա Սէրայի քովի փողոց թիւ 14 արարթըմանը: